Ազգային ուսումնական օլիմպիադա աշխարհագրությունից
III փուլ
2023 թ.

- *Հարց ընտրովի պատասխաններով - առաջադրանք № 1*

Հրահանգ

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա, հետևյալ կերպ՝ պատասխանի համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(5) 1. Վերլուծե՛ք Նյու Յորքի մասին տրված տեղեկությունները և պատասխանե՛ք հարցերին.

Նյու Յորքի վարչական քարտեզ



Նյու Յորքի Մետրոպոլիտեն

(1) 1.1. Ինչպե՞ս էր կոչվում Նյու Յորքը 1664 թվականին:

ա) Նոր Լոնդոն,
բ) Նոր Բրյուսել
գ) Նոր Դուբլին,
դ) Նոր Ամստերդամ:

(1) 1.2. Նյու Յորքի ո՞ր թաղամասում է բնակչությունը բոլորից սակավաթիվ (քաղաքի ընդհանուր բնակչության 5,6%-ը):

ա) Սթեյթեն Այլենդում,
բ) Բրուքլինում,
գ) Քուինսում,
դ) Բրոնքսում:

(1) 1.3. Ներկայացված լեգենդներից ո՞րն է համապատասխանում Նյու Յորքի վարչական բաժանման քարտեզին:

ա) 1 Բրուքլին 2 Մանհեթեն 3 Բրոնքս 4 Քուինս 5 Սթեյթեն Այլենդ	բ) 1 Բրոնքս 2 Մանհեթեն 3 Սթեյթեն Այլենդ 4 Քուինս 5 Բրուքլին
գ) 1 Սթեյթեն Այլենդ 2 Մանհեթեն 3 Բրոնքս 4 Քուինս 5 Բրուքլին	դ) 1 Մանհեթեն 2 Բրուքլին 3 Քուինս 4 Բրոնքս 5 Սթեյթեն Այլենդ

(1) 1.4. Կենդանական աշխարհի ո՞ր ներկայացուցիչներն են պատկերված ք. Նյու Յորքի կնիքի վրա:

ա) սպիտակագլուխ գառնանգղ և ճահճակուղբ,
բ) սպիտակագլուխ ծովարծիվ և կուղբ,
գ) սպիտակագլուխ կոնդոր և ջրաքիս,
դ) սպիտակագլուխ ցախաքլորառոս և գորշուկ:



(1) 1.5. Ո՞ր կլիմայական դիագրամի տվյալներն են համապատասխանում ք.Նյու Յորքում տարածված խոնավ մերձարևադարձային կլիմային:



➢ *Համապատասխանության որոշում - առաջադրանք № 2 - 4*

Հրահանգ

Որոշեք համապատասխանությունը և նմուշի համաձայն լրացրեք պատասխանների թերթիկում տրված համապատասխան աղյուսակը: Միավորների քանակը սահմանվում է՝ ըստ կոնկրետ առաջադրանքի:

(6) 2. Տրված տեղեկությունների հիման վրա լրացրե՛ք աղյուսակը՝ ըստ նմուշի:

	Տեղանքի լուսանկարը/աշխարհագրական տեղեկատվություն	Պետություն
Նմուշ.	 ***Վաշլովանիի պահպանվող տարածքի սահմաններում գտնվում է Տախտի-Տեփա ցեխային հրաբուխների բնության հուշարձանը:***	***Վրաստան***
1	 Ջիգոկուդանի կապիկների այգին (850 մ ծովի մակարդակից): Տաք երկրաջերմային աղբյուրի և օդի ջերմաստիճանի միջև տարբերությունը ձմռանը գոլորշի է ստեղծում, ինչից ելնելով էլ այն անվանում են «Դժոխքի հովիտ»:	

2	 Երկրի ամենաբարձր կետը Բեն Նևիս (1344 մ ծովի մակարդակից), այսինքն՝ «Չար լեռ», ամենայն հավանականությամբ, անվանել են կլիմայի պատճառով, քանի որ ողջ տարվա ընթացքում այստեղ կարելի է հաշվել ընդամենը մի քանի արևոտ և անամպ օր:	
3	 Պորորոկա՝ Ամազոն գետի մակընթացային ալիքը շատ գրավիչ երևույթ է սերֆինգիստների համար: Սերֆինգիստների նպատակն է գտնվել այստեղ սեպտեմբերի 23-ին:	

4	 Մեծ Արտեզյան ավազանում առաջին հորատանցքը հորատվել է 1878 թվականին: Նրա ջուրն օգտագործվում է ինչպես կենցաղային, այնպես էլ գյուղատնտեսական՝ ոռոգման նպատակով:	
5	 Դենալի ազգային պարկի այցելուները ցանկացած պահի կարող են հանդիպել ճանապարհին զբոսնող տեղի կենդանական աշխարհի ներկայացուցիչներին:	

6	 Ասուան ամբարտակի կառուցման հետևանքով շատ պատմամշակութային հուշարձաններ հայտնվեցին ջրասուզման վտանգի տակ: Դրանց թվում էր ժայռի մեջ փորված Աբու Սիմբելի տաճարը (մ.թ.ա. XIII դար), որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից տեղափոխվեց ապահով վայր:	

(6) 3. Տրված տեղեկությունների հիման վրա լրացրե՛ք աղյուսակն՝ ըստ նմուշի.

	Լիճ/ջրամբար	Մայրցամաքը, որտեղ գտնվում է	Ծագման տեսակը
Նմուշ.		*Եվրոպա*	*Անթրոպոգեն*

1	Դերիբա լիճ (Դարֆուրի սարավանդ)		
2	Պեյտո (Ժայռոտ լեռներ)		
3	Բայկալ (Արևելյան Սիբիրի հարավ. մաս)		

4	Լիճ՝ Միսիսիպի գետի մոտ, նահանգ Լուիզիանա		
5	Մարակայբո (Սուլիա հարթավայր)		
6	Սենոտ Իկ Կիլ (Յուկատան թերակղզի)		

(6) 4. Տրված տեղեկությունների հիման վրա լրացրե՛ք աղյուսակն՝ ըստ նմուշի.

	Լուսանկար	Պետություն	Տարածաշրջան
Նմուշ.		Իտալիա	Լոմբարդիա
1			
2			

3	 Իֆ ամրոց (ք. Մարսել)		
4	Սենտ Էմիլիոն կոմունա (ք. Բորդոյի մոտ)		
5	Ուֆֆիցի պատկերասրահ (ք. Ֆլորենցիա)		
6	Սուրբ Մարկոսի տաճար (ք. Վենետիկ)		

➢ *Տեղեկատվության վերլուծություն - առաջադրանք № 5 - 7*

Հրահանգ
Վերլուծեք առաջադրանքում տրված տեղեկությունը և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է՝ ըստ կոնկրետ առաջադրանքի:

(4) 5. Վերլուծե՛ք տրված տեղեկությունները և պատասխանե՛ք հարցերին.



(3) 5.1. Ի՞նչ ռիսկի առաջ են կանգնել աֆրիկյան մայրցամաքի երկրները 2022 թվականից և ո՞ր գործոնն է պայմանավորել այդ ռիսկը: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

(1) 5.2. Ո՞ր միջազգային կազմակերպությունն է ներգրավված գործընթացների կարգավորման և այդ ռիսկի կանխարգելման գործում:

(6) 6. Վերլուծե՛ք տրված տեղեկությունները և պատասխանե՛ք հարցերին.



Պահպանվող տարածքների հիմնական գործառույթը երկրի բնական ժառանգության պահպանումն է: Վրաստանում առաջին պաշտոնական արգելոցը ստեղծվել է 1912 թվականին՝ Կախեթիի տարածքում:

Համաձայն Վրաստանի օրենսդրության՝ երկրում կարող են գոյություն ունենալ հետևյալ պահպանվող տարածքները՝ Պետական արգելոց, Ազգային պարկ, Բնության հուշարձան, Արգելավայր, Պահպանվող լանդշաֆտ և Բազմակողմանի օգտագործման տարածք: Այսօրվա դրությամբ, Վրաստանում գոյություն ունի պահպանվող տարածքների հինգ կատեգորիա:

Մեր երկրում առանձնահատուկ երևույթ են համարվում բնության անկենդան (անօրգանական) հուշարձանները (դրանցից 77-ը ընդգրկված են Կարմիր գրքում): Առանձնացնում են բնության անօրգանական հուշարձանների երկու տեսակ՝ երկրաբանագեոմորֆոլոգիական և հիդրոլոգիական (ջրաբանական): Դրանցից հատկանշական են՝ Աբանոյի հանքային լիճը, Բոդորնայի քարե սյուները, Գոդերձիի բրածո անտառը, Թրուսոյի տրավերտինները, Աբաշա գետի վրա գտնվող ջրվեժը, Քեթերիսիի հանքային վոկլյուզը, Ռոշկիի գլաքարերը, Ցուցխվաթի քարանձավը և այլն:

(1) **6.1.** Ո՞րն է Վրաստանում ստեղծված առաջին արգելոցը:

---

(1) 6.2. Պահպանվող տարածքների ո՞ր տեսակը *գոյություն չունի* Վրաստանում:

---

(2) **6.3.** Թվարկված անօրգանական բնության հուշարձաններից ո՞րն է պատկանում երկրաբանագեոմորֆոլոգիական խմբին (անվանե՛ք բնության երկու հուշարձան):

---

(3) **(2) 6.4.** Թվարկված անօրգանական բնության հուշարձաններից ո՞րն է պատկանում հիդրոլոգիական (ջրաբանական) խմբին (անվանե՛ք բնության երկու հուշարձան):

---

(12) 7. Վերլուծե՛ք տրված տեղեկությունները և պատասխանե՛ք հարցերին.








1900 թ.
2010 թ.
Բոսոնի սառցադաշտ
1900 թ.
2010 թ.
Ֆերպեդի սառցադաշտ


AMO ինդեքս (°C, ջերմաստիճանի փոփոխությունը)
Սառցադաշտերի ծավալային փոփոխությունը (մ)
0.9
0.7
0.5
0.3
0.1
-0.1
-0.3
-0.5
0
-20
-40
-60
-80
-100
-120
-140
-160
-180
-200
1850 1860 1870 1880 1890 1900 1910 1920 1930 1940 1950 1960 1970 1980 1990 2000 2010 2020


Օդի միջին ջերմաստիճանի դինամիկան ամռանը
1851-2020 թթ. (2200 մ ծովի մակարդակից)
t°C
12.0
11.0
10.0
9.0
8.0
7.0
6.0
5.0
4.0
3.0
1850
1860
1870
1880
1890
1900
1910
1920
1930
1940
1950
1960
1970
1980
1990
2000
2010
2020


Ջուր
Օդ
Ստորգետնյա Էլեկտրագծեր և ջրմուղներ


Ջրի ճնշումը ստեղծվում է
ձգողության ուժով
Սառցադաշտ
Ձյան լարեր
Սառցադաշտային լիճ

Հյուսվածքի կտորներ

PARIS2015
UN CLIMATE CHANGE CONFERENCE
COP21·CMP11

(1) **7.1.** Ո՞ր լեռնային համակարգի մասին են առաջադրանքում տրված տեղեկությունները**:**

(1) **7.2**. Ինչպիսի՞ն է առաջադրանքում նկարագրված լեռնային համակարգի սառցադաշտերի մակերեսի դինամիկան վերջին հարյուր տարվա ընթացքում:

(1) **7.3**. Ո՞ր գլոբալ աշխարհագրական գործընթացն է պայմանավորում առաջադրանքում նկարագրված իրավիճակը:

(2) **7.4.** Բոլորից շատ զբոսաշրջության ո՞ր բնագավառի դեգրադացմանը կհանգեցնի տվյալ լեռնային տարածաշրջանում գլոբալ գործընթացի նման միտումի շարունակական ընթացքը: Ո՞րն է այս բնագավառի դեգրադացմանը հանգեցնող գլխավոր օդերևութաբանական գործոնը:

(2) **7.5.** Ո՞ր միջազգային մարզական ֆորումներ են անցկացվում տարածաշրջանի բարձրալեռնային հանգստավայրերում (Շամոնի, Սանկտ Մորից, Ալբերվիլ և այլն) և ի՞նչ լրացուցիչ ծախսեր են պահանջվում այդ ֆորումների կազմակերպիչներից՝ ելնելով նշյալ գլոբալ բնական գործընթացի միտումներից:

(2) **7.6.** Բացատրե՛ք, ինչպիսի՞ն կլինի սառցադաշտերի մակերեսի փոփոխությունների դինամիկան առաջիկա հարյուր տարվա ընթացքում՝ գլոբալ գործընթացների տվյալ միտումը պահպանվելու դեպքում, և ինչը՞ կլինի այդ միտումի գլխավոր պայմանավորող գործոնը:

(3) **7.7.** Ո՞ր հարցին էր նվիրված Փարիզի համաժողովը, որի լոգոն տրված է առաջադրանքում, և ի՞նչ համաձայնության եկան այս համաժողովում: Ստորագրել է, թե՞ ոչ Վրաստանն այս համաձայնագիրը: